Ո՞Վ Է ԹՈՎՄԱՅԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ»-Ի «ՄԱՆԻԹՈՊ ԱՐՔԱՅ ԽԵՓՏԱՂԱՑ»-Ը

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ

Թովմա Արծրունու Պատմության Ա գրքի 3-րդ գլխում, որտեղ հիմնականում ներկայացված է Զրադաշտի ուսմունքը, ավելի ճիշտ՝ գրա գնոստիկյան հոսանք զրվանությունը, ուշադրություն է գրավում «Իսկ Մանիթոպ արքայ Խեփտաղաց զայսոսիկ հաստատէ» արտահայտությունը: Առաջինը, ով զուգորդվում է այդ անվան հետ՝ հին եգիպտական քուրմ և պատմաբան Մանեթոնն է. նրա գրչին են պատկանում փիլիսոփայական, աստվածաբանական, պատմական մի շարք աշխատություններ և, մասնավորապես, Եգիպտոսի պատմությունը, որից հատվածներ են պահպանվել Հովսեփոս Փլավիոսի, Ափրիկանոսի և Եվսեբիոս Կեսարացու երկերում: Նրա մասին վերջինս գրում է. «... բայց Մանեթովս այր Եգիպտացի ազգաւ... գրեաց յեղղական բարբառ զիւր գաւառական պատմութիւն...»[1], և քանի որ Մանեթոնը չէր կարող լինել «արքայ Խեփտաղաց»-ը, բնականաբար, ծագում է այն, կասեի, մակերեսային ենթադրությունը, թե գործ ունենք բնագրի աղավաղման հետ և «Մանիթոպ արքայ Խեփտաղաց»-ի փոխարեն, թերևս, գրած է եղել «իսկ Մանիթոն այր եգիպտացի», ինչպես նա ներկայացված է Եվսեբիոսի Քրոնիկոնում, առավել ևս, որ փոքր-ինչ վերև, սույն գլխի մեկ այլ պերսոնաժ Զրադաշտին, Թովման ներկայացնում է Քրոնիկոնից քաղած բառացի փոխառությամբ. «... Զրադաշտ մոգ, արքայ բակտիացւոց...»[2]: Այդ ենթադրությունն առաջադրված է Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ի մեր ռուսերեն թարգմանությանը կից ծանոթագրություններում[3]: Սակայն հետագա ուսումնասիրությունը[4] փոխել է մեր պատկերացումներն այդ հարցի վերաբերյալ: Մի կողմից, Եվսեբիոսի Քրոնիկոնի լավ իմացությունը բացառում է Թովմայի կողմից նման հայտարարություն անելու հնարավորությունը, մյուս կողմից՝ սույն գլխի ընդհանուր բովանդակությունը բացառում է նաև գրչական վրիպակի առկայությունը: Դրանից հետևում է, որ խոսքը ոչ թե եգիպտական պատմիչ Մանեթոնի, այլ ինչ-որ մեկ այլ անձնավորության մասին է, որը կրում է նույն կամ էլ շատ նման մի այլ անուն:

---

[1] *Եւսէբի Կեսարացւոյ Ժամանականք երկմասնեայ (այսուհետև՝ Քրոնիկոն), Վենետիկ, 1818. Ա, էջ 222-223:*

[2] *Նույն տեղում, էջ 95:*

[3] Товма Арцруни и Аноним. История Товмы Арцруни. Перевод с древнеармянского, вступительная статья и комментарии М. О. Дарбинян-Меликян. Ереван, 2001, с. 356-357, прим. 23.

[4] *Մեզ գրգել է դրան հայագետ Վ. Աբգարյանը, որը մասնավոր զրույցի ժամանակ կասկածելի է համարել հարցի նման մեկնաբանությունը, ենթադրելով, որ, թերևս, Թովմայի Մանիթոպը կապված է արևելյան ինչ-որ առասպելների հետ (օգտվելով առիթից՝ հայտնում եմ անկեղծ շնորհակալություն):*

Առաջինը, ում մոտ հանդիպում ենք նման անվան, Վարդանն է, որը հետջրհեղեղային մարդկանց բնակեցման մասին պատմելիս գրում է, թե Նոյը «... զկնի ելիցն ի տապանէն... ծնաւ, ասէն, որդի մի այլ՝ Մանիտոն անուն, և դուստր մի Աստղիկ անուն... և մասն ինչ յարևմտից յատանեալ՝ ետ Մանիտոնի... և ետ նմա զլսրունս ծնկացն (Ադամայ)...»[5]*: Այս հատվածի բովանդակությունը մատնացույց է անում երկու աղբյուր՝ մեկը ինչ-որ անկանոն մի գրվածք է, մյուսը՝ Մովսես Խորենացին:*

Հին կտակարանի անկանոն գրքում, իրոք, հանդիպում ենք Մանետուն անվանը հետևյալ կոնտեքստում. «Իսկ Նոյ առեալ զօրհնութիւն Աստուծոյ, էջ ի լեռնէն և բնակեցաւ [յ] Ակորի: Երբ բազմացան զաւակք նորա՝ ի-ջին [յ] ջեւան և անդ ապրեցան երեք հարիւր տարի: Եւ երկու որդիքն Անդուն և Մանետուն և (միւս) որդիքն աճեցան և բազմացան և լցին զնախիջեւան, և նովաւ՝ լցին զաշխարհս: Եւ անուն տեղւոյն կոչեցաւ Նախիջեւան[6]*, և այն է գերեզման Նոյի»*[7]*: Ակնհայտ է, որ Վարդանի հիշատակած Մանիտոնը և անկանոն գրքերի Մանետունը միևնույն անձնավորությունն է:*

Ինչպես Վարդանի մոտ, այնպես էլ Անկանոն գրքերում, Մանիտոնը ներկայացված է որպես Նոյի ջրհեղեղից հետո ծնած որդի, սակայն Ծննդոց գրքում ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե Նոյը ջրհեղեղից հետո որդիներ է ծնել: Հարցի կապակցությամբ Եպիփանոսը հետևյալ կարծիքն է արտահայտում. «Ջրհեղեղից հետո, քանի որ Նոյան տապանը կանգ է առել Արարատյան լեռներում... ապա սկզբից այնտեղից է կատարվում մարդկանց բնակեցումը... 669 տարիների ընթացքում նրա որդիներից (չի երևում, որ ինքը՝ Նոյն էլի որդիներ ծնած լիներ) ծնվում են որդիներ և որդիների որդիներ»[8]*: Այսպիսով, «ծնաւ» «որդի մի այլ Մանիտոն» ասելով՝ ենթադրվում է ոչ թե Նոյի անմիջական որդի լինելը, այլ այն, որ Մանիտոնը սերում է Նոյից՝ ուղիղ վայրընթաց գծով: Այդ դեպքում նա Նոյի երեք որդիներից ո՞ր մեկի սերունդներից է: Ելնելով Վարդանի տեղեկություններից՝ Սեմը, Քամը և Հաբեթը Մանիտոնի և Աստղիկի եղբայրներն են: Աստղիկին հանդիպում ենք նաև Խորենացու Պատմությունում Բերոսյան Ափբիլլայից քաղած առասպելում. «Արդ՝ ի բռնանալն, ասէ, Զրուանայ՝ ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսթէ ի մարտ պատերազմի ընդ նմա գրգռելով... Աստ ի մէջ անցեալ քոյր նոցա Աստղիկ՝ համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն և յանձն առնուն թագաւորել Զրուանայ, բայց դաշինս ուխտից և երդմանց ի միջի հաստատէն, սպանանել զամենայն արու՝ որ ծնանիցի Զրուանայ... Եւ սպանեալ զերկուս ոմանս վասն երդման... խորհի այնուհետև քոյր նոցա Աստղիկ հանդերձ կանամբք Զրուանայ, հաւանեցուցանել զոմանս ի Տիտանաց՝ ապրեցուցանել զայլ մանկունս, և*

---

[5] *Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 15:*

[6] *Նախիջևանի մասին առասպելը հայտնի էր Հովսեփոս Փլավիոսին: «Այդ տեղը,– գրում է նա,– հայերը անվանում են «իջման տեղ», և մինչ այժմ էլ բնիկները ցույց են տալիս այնտեղ տապանից պահպանված մնացորդները»* (И о с и ф Ф л а в и й. Иудейские древности. М., 1996, I, 3, §5)*:*

[7] *Թանգարան հին և նոր թարգմանութեանց նախնեաց. Ա. Անկանոն գիրք, Վենետիկ, 1896, էջ 323-324:*

[8] Y. M i g n e. Patrologiae graecae. T. XLI, Panarium. Lib. I, tom. I. s. 182.

յարևմուտս կոյս յուղարկել ի լեառնն, որ անուանեալ կարդային Դնեցընկեց, իսկ այժմ կոչի Ոլիմպ»[9]: Այս երկու ցուցմունքներում կարևոր է երկու հանգամանք. 1. Աստղիկը Սեմի քույրն է, իսկ ըստ Խորենացու վկայության՝ «... կողմանք արևելից Զրուան զՍէմ կոչէն»[10]: 2. ըստ Վարդանի՝ Նոյը «... մասն ինչ յարևմտից յատանեալ՝ ետ Մանիտոնի»: Իսկ վերոբերյալ Բերոսյան Սիբիլլայից հատվածում, Աստղիկը սպանությունից փրկված մանուկին «ի յարևմութս կոյս» է ուղարկում: Դրանից կարելի է եզրակացնել, որ երկու դեպքում էլ խոսքը Մանիտոնի մասին է և քանի որ նրա՝ Նոյի որդի լինելը բացառվում է, ուրեմն նա Զրուանի=Սեմի որդին, ավելի ճիշտ, նրա սերունդներից է:

Աղբյուրները Սեմին կապում են Արևելքի հետ, նշելով, որ նրա սերունդների բնակեցումը կատարվում էր Արևելքի ուղղությամբ: Այսպես, օրինակ, Հովսեփոս Փլավիոսը այդ կապակցությամբ գրում է՝ «Նոյի երրորդ որդի Սեմը ուներ հինգ որդի, որոնց սերունդները բնակեցրել են Ասիաստանը, սկսած Եփրատ գետից մինչև Հնդկական օվկիանոսը»[11]: Սեմին և նրա սերունդներին Արևելքի հետ կապում է նաև Եվսեբիոսը. «Եւ ի Սէմայ, որ երէց եղբայրն էր՝ զասորեստանեայսն և յամենայն կողմանս արևելից»[12]:

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ լինելով Սեմի հետնորդը՝ Մանիտոնը պետք է բաժին ստանար արևելյան կողմերում: Որպես այդ ենթադրության կողմնակի ապացույց կարող է ծառայել Խորենացու հետևյալ հաղորդումը, որը, մանրամասնելով Սեմի սերունդների բնակեցումն արևելյան կողմերում, մեջ է բերում մի անգիր հին զրույց. «Մատեան լեալ զՔսիսութրեայ[13] և զորդւոյ նորա, որ այժմ ոչ ուրեք երևի, յորում, ասեն, կարդ լեալ բանից այսպիսի: Յետ նաւելոյ Քսիսութրեայ ի Հայս և դիպելոյ ցամաքի, դնա, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սէմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն... և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, ուստի եկն: Նորին դարձեալ և առ եզերբ սահմանացն բակտրիացւոց ասէին բնակել սակաւ աւուրս, մնացեալ և մի ոմն յորդւոց նորա անդ»[14]: Թվում է, որ այդ «մի ոմն»-ը հենց Անկանոն դրքերի և Վարդանի Մանետուն-Մանիտոնն է, որը մնացել և, հետևաբար, բնակություն է հաստատել «առ եզերբ սահմանացն բակտրիացւոց», այսինքն այն տարածքում, որտեղ հաստատվել են դեռևս մ. թ. ա. VII դ. վերջում հյուսիսարևմտյան Զինաստանից գաղթած «սպիտակ դի»-երի ցեղերը. այդ ցեղերի ճյուղերից մեկը՝ հեփտաղները մ. թ. II-III դդ. ստեղծել են թագավորություն և 384 թ. հանդես եկել պատ-

---

[9] Ա, VI, էջ 24:

[10] Ա, VI, էջ 20: Աստվածաշնչային հին անունները հին արևելյան և հունական դիցաբանության հետ խառնելու և համեմատելու կապակցությամբ տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց Պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ս. Մալխասյանի. Երևան, 1997, էջ 283-284, ծան. 19-20: Ս ե բ ե ո ս, Պատմութիւն, 4-րդ տպ., բաղդադութեամբ, ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանօթութեամբք ի ձեռն Ս տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1939, էջ 164–166, ծանոթ. 8:

[11] Թանգարան հին և նոր..., Ա, VI, § 4:

[12] Քրոնիկոն, Ա, էջ 109:

[13] «Եւ արդ՝ մերձ է և քեզ անդստին այսցանէ,– գրում է Եվս. Կեսարացին,– որ զճշմարտութեան բանիւն գայցես, յանցնէ իմանալ, եթէ Քսիսուտրոն նոյն է, որ եբրայէցւոցն Նոյ կոչի»: (Քրոնիկոն, Ա, էջ 29-30):

[14] Խ ո ր ե ն ա ց ի, Ա, VI, էջ 26:

մական բեմում որպես Սասանյան Իրանի դաշնակիցներ՝ մոտ երկու դարի ընթացքում պաշտպանելով նրա հյուսիսային սահմանները եվրասիական տափաստանի քոչվոր ցեղերի հարձակումներից[15]:

Այժմ հիմքեր կան նույնացնելու Մանիտոնին Թովմայի «Մանիթոպ արքայ Խեփտաղաց»-ի հետ: Եթե Մանիտուն Մանետոն-Մանիթոպը Սեմի հետնորդն է, իսկ Սեմը հին արևելյան առասպելների Զրվանն է, զրադաշտական լույսի ու կրակի աստված Որմիզդի հայրը, զրադաշտության դրկում առաջացած դնոստիկյան հոսանքի՝ զրվանության գլխավոր աստվածությունը՝ հոսանք, որի էությունը և ներկայացնում է իր Պատմության Ա գրքի 3-րդ գլխում Թովմա Արծրունին, ապա ո՞վ է այն իրական անձնավորությունը, որը անճանաչելիորեն փոխված թաքնվում է Մանիթոպ անվան տակ, մի անձնավորություն, որը շարունակել և զարգացրել է զրվանության հիմնական դաղափարը: Թվում է, որ դա կարող էր լինել միայն մանիքեության հիմնադիր Մանին[16]. *Մեր այդ համոզմունքը բխում է հենց Թովմայի շարադրածի բովանդակությունից: «Զրադաշտր,– ասում է,– այսպէս զառածանէր, զՍէմ որդի Նոյի ասել Նոր Զրուան... և յղացաւ Զրուանն երկուորիս... իսկ խարդախն ի նոցանէ... նախաժաման եկն առաջ: Եւ հարցեալ Զրուանն ո՞վ ես դու՝ ասէ, ես եմ որդին քո Որմիզդ. և նա ասէ. Որդին իմ Որմիզդ լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարայն ես և չարասէր... Որմզդ արար զլոյս, Արհմն արար զխաւար...» (էջ 26)*:

Այս հատվածում Թովման պարզեցված ձևով ներկայացնում է զրվանության երկու հիմնական հատկանիշները՝ 1. հավիտենական ժամանակի (այսինքն Զրվանի), հավիտենականության դաղափարը և 2. առասպելը Որմիզդի և Ահրիմանի ծնելու մասին: «Իսկ Մանիթոպ,– շարունակում է Թովման,– արքայ Խեփտաղաց ևս յաւելուածով զայսոսիկ հաստատէ. ոչ ասել զհուր արարած Որմզդի, այլ բնութիւն Որմզդի... և երկիր պանդոկի Սպանդարամետ Աստուծոյ է ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր, և կա մնա...» (էջ 27–28):

Մանիի ուսմունքի համաձայն «լուսն ու խավարը նախնական սկզբունքներ են», այսինքն, Թովմայի խոսքերով ասած, կրակը (լույսը) ոչ թե Որմիզդի ստեղծած, իրենից անջատ նյութ է, այլ նրա էությունն է (բնութիւնն է), իսկ ... ամբողջ աշխարհը և դոյություն ունեցող կարդերը խավարի, չարի մարմնացումն են, այսինքն՝ ինչպես Արծրունին է ասում, Սպանդարամետի (խավարի և չարի աստծո) կացարանը:

Առաջանում է բնական հարց. իսկ ինչո՞ւ է Արծրունին համարում Մանիթոպ-Մանիին հեփտաղների արքա: Արդյո՞ք իրական Մանիի և հեփտաղների միջև դոյություն ուներ ինչ-որ կապ: Մանին (216-276 թ.) ծնվել է արևմտյան Իրանում, իր ուսմունքի քարոզչությունը սկսել մ. թ. III դ. կեսերից, ենթարկվելով հալածանքների՝ տեղափոխվում է արևելյան Իրան (Թուրան), որտեղ նրա ուսմունքը լայնորեն տարածվում է, ինչը ժամանա-

---

[15] *Տե՛ս* Л. Н. Гумилев. Тысячелетие вокруг Каспия. М., 1993, с. 111. Он же. Эфталиты и их соседи в IV в.– ВДИ, 1959, N 1, с. 129-140. Он же. Древние тюрки. М., 1967, с. 18-19. Р. Фрай. Наследие Ирана. М., 1972 г. с. 307-312.

[16] *Տե՛ս Ե. Գ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 91-106:*

կի առումով համընկնում է հեփտաղների թագավորության առաջացման հետ: Երբ 384 թ. հեփտաղներն առաջին անգամ հայտնվում են պատմական բեմում, մանիքեությունը նրանց միջավայրում արդեն գերիշխող կրոն էր: 569 թ. Թուրքական կոտորածից հետո, երբ հեփտաղների թագավորությունը դադարել էր գոյություն ունենալուց, դժվարհասանելի լեռնային շրջաններում մնացած փոքր հեփտաղական իշխանություններում շարունակում էր իր իշխող դիրքը պահպանել մանիքեությունը[17]: Ահա թե ինչու արևելյան ժողովուրդների առասպելաբանական գիտակցությունում Մանին աստիճանաբար կերպարանափոխվում, դառնում է հեփտաղաց առասպելական թագավոր: Թերևս որոշ դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Մանին մոր կողմից ծագում էր պարսից Արշակունի հարստությունից: Հօդուտ Մանիի հետ Մանիթոպի նույնացմանը խոսում է նաև այն փաստը, որ Զրադաշտը, ինչպես այդ ընդունում է մասնագետների մեծամասնությունը, ապրել և իր ուսմունքի քարոզչությամբ հանդես է եկել արևելյան Իրանում[18]:

Եթե Թովմա Արծրունու Մանիթոպ անվան տակ թաքնվում է Մանին, ապա առաջանում է վերջինիս և Զրադաշտի ժամանակագրական անհամապատասխանության հարցը (մ. թ. III դ. - մ. թ. ա. VI դ.): Սակայն Թովմայի հաղորդումը, թե «Իսկ Մանիթոպ արքայ խեփտաղաց ևս զայսոսիք հաստատէ...» ամենևին էլ չի պարունակում որևէ ցուցմունք նրանց ժամանակագրական առումով մոտիկ լինելու մասին, այլ միայն վկայում է նրանց հայացքների դաղափարական ուղղվածության ընդհանրության մասին: Մանիթոնին (Մանիին) որպես «արքայ խեփտաղաց» ներկայացնելն արտացոլում է այն իրական դերը, որ ուներ մանիքեությունը հեփտաղների միջավայրում[19]:

Հին հեղինակներն իրենց ստեղծագործությունները սովորաբար դրում էին որոշակի նպատակով. Թովմա Արծրունու նպատակն էր՝ Արծրունյաց իշխանների ծագումնաբանությունը և այդ տեսակետից «Մանիթոպ արքայ խեփտաղաց»-ն անմիջականորեն չի կապված այդ խնդրի հետ, սակայն հետաքրքրություն է ներկայացնում այն տեսակետից, թե հին հայոց պատմիչների գործերում ինչպես է արտահայտվել այսպես կոչված սինկրետիզմի երևույթը, որի էությունն էր՝ արևելյան (հիմնականում՝ իրանական և ասորա-բաբելոնական) և արևմտյան (հելլենիստական) մշակույթների, կրոնաառասպելաբանական պատկերացումների փոխներթափանցումը և որը, սկսվելով մ. թ. ա. VI դ., երբ ստեղծվել է Աքեմենյան կայսրությունը, ավելի լայնածավալ դարձավ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո, իր մեջ ներառելով նորանոր ժողովուրդների մշակույթներ ու հավատալիքներ:

---

[17] Р. Фрай. Նշվ. աշխ., էջ 304, 307, 312, 314:

[18] Նույն տեղում, էջ 53-54:

[19] Հեփտաղներին (Հեփթաղներին) վերաբերող հայկական աղբյուրների տեղեկությունները հավաքված և քննության են առնված Կ. Վ. Տրևերի հոդվածում՝ К. В. Тревер. Кушаны, хиониты и эфталиты по армянским источникам IV—VII вв. (к истории народов Средней Азии).— "Советская археология", XXI, 1954, с. 131—147.

КТО ТАКОЙ "МАНИТ(Ф)ОП, ЦАРЬ ЭФТАЛИТОВ" В ИСТОРИИ ТОВМЫ АРЦРУНИ

М. О. ДАРБИНЯН-МЕЛИКЯН

Резюме

В 3-й главе 1-й книги труда армянского историка Товмы Арцруни (IX–X в.) "История дома Арцруни", где в упрощенной форме он излагает суть гностического учения зрванитов, возникшего в лоне зороастризма, наше внимание привлек следующий фрагмент: "Манит(ф)оп же, царь эфталитов, к этому (т. е. учению зрванитов) еще добавляет и утверждает, что огонь (свет) не создан Ормиздом, но является его естеством... а... Земля – это обитель Спандарамета (злого духа, бога тьмы)". Исследование легендарных свидетельств, сохранившихся в армянских источниках – в Истории Вардана (XIII в.), Апокрифических книгах Ветхого завета и, в особенности, в Истории Мовсеса Хоренаци и их сопоставление со сведениями, почерпнутыми из восточной мифологии, в трудах Иосифа Флавия, Евсевия Кесарийского и Епифания Кипрского, привели нас к выводу, что под именем легендарного царя эфталитов Манит(ф)опа скрывается Мани, создатель манихейства, что подтверждается и содержанием вышеприведенного фрагмента.

Рассматриваемый вопрос представляет интерес с точки зрения того, как отразилось в трудах средневековых армянских историков явление синкретизма, то есть процесс взаимопроникновения восточной (премущественно иранской и ассиро-вавилонской) и западной (эллинской) культур и, в частности, религиозно-мифологических представлений.